

Армянский Колледж

Учитесь АРМЯНСКОМ ГОВОРИТЬ НА ЯЗЫКЕ

+7 904 506 91 28

Հետաքրքիր է իմանալ

Երբ արտահայտվում են ծաղիկների միջոցով

Տոների ժամանակ միմյանց ծաղիկներ նվիրելը, կամ ծաղիկների միջոցով ուղղակի ուշադրություն ցուցաբերելը ավանդույթ է դեռևս հնագույն ժամանակներից: Գեղեցիկ ավանդույթ, որն ի գործ է հիացնել, արթնացնել մարդկանց մոտ ջերմ զգացողություններ: Իսկ թե ինչ նշանակություն ունի նվիրվող ծաղիկ գույնը և, որ ծաղիկը ինչ է խորհրդանշում կներկայացնենք ձեր ուշադրությանը:

Կարմիր վարդ – սեր, կիրք, կարծես ակամա շշուշում է՝ «Ես սիրում եմ քեզ, դու պետք ես ինձ»:
Կոկոն վարդ – արտահայտում է ամենավեճ զգացմունքները և ասում՝ «Թվում է՝ սիրահարվել եմ քեզ, ուրախ եմ, որ ձանաչում եմ քեզ»:

Սպիտակ վարդ – համեստություն, նրբություն, գաղտնիություն: «Ես կարճատև եմ, դու հրեշտակ ես»:

Դեղին վարդ – երջանկություն, ուրախություն: «Դու իմ արևն ես»: Այս ծաղիկն արտահայտում է ամենալավատեսական էմոցիաները: Համաձայն ծաղիկների լեզվի՝ դեղին վարդերը ոչ մի առնչություն չունեն դավաճանության կամ խանդի հետ, չնայած, որ այդ վարդերը շատ տարածված է:

Ակացիա – գաղտնի սեր, միայնություն: Ակացիան զոջանքի և սխալների ընդունման նշան է: Ակացիա նվիրողն ասում է՝ «Դու իմ կյանքում եղած ամենամեծ բանն ես, ինչո՞ւ հիմա մենք միասին չենք կամ արի սկսենք ամեն ինչ նորից»:

Նարնջագույն շուշան – հետաքրքրություն, կրկեսություն: Ծաղիկների լեզվով նշանակում է՝ «Դու ինձ համար հանելուկ ես, քո սիրտն ազա՞տ է»:

Սպիտակ շուշան – մաքրություն, վեհություն, ազնվություն: Ասում է՝ «Աստվածային է լինել քո կողքին»:

Վարդագույն շուշան – հպարտություն, առատություն, բարեկեցություն:

Արևածաղիկ – հպարտություն, սակայն նաև հեզություն: Արևածաղիկ նվիրողը կարծես թե ասում է՝ «Դու հրաշք ես, ես երբեք չեմ հանդիպել ոչ մեկին, ինչպիսին դու ես, ես հպարտանում եմ, որ դու ինձ հետ ես»:

Չնծաղիկ – հույս, նրբություն, երիտասարդություն: Չնծաղիկ նվիրողը ցանկանում է ընդգծել ձեր փնտրությունն ու կանացիությունը: Ասում է՝ «Դու վեհություն ես»:

Ամուռուկ – հիշողություններ, իրական սեր, անկեղծություն, հաստատունակություն, հավատարմություն:

Միմոզա – զգայնություն, ամոթի զգացողության ունակություն, ամաչկոտություն, սակայն միևնույն ժամանակ խելամուտություն: Մեղմ շշուշում է՝ «Ես թաքցնում եմ իմ զգացմունքները»:

Կալյա – հնազանդություն, թեթևամարդը ձեզ նվիրում է կալյա, համոզված եղեք, որ ձեր առջև իսկական ջենտլմեն է և արտակարգ մարդ: Կալյան ձեզ ասում է՝ «Դուք հիասքանչ եք»:

Կակոս – հաստատակամություն, կատակալացողություն, ինքնաբավարարվածություն: Կակոսը ձեզ նախադրում է ասելով՝ «Քեզ չի՞ ձանձրացրել միայնությունը»:

Չանգակածաղիկ – համակերպվածություն, հնազանդություն, հաստատունակություն: «Ես միշտ կլինեմ քեզ հետ, ինչո՞ւ ես դու ինձ տանջում քմահաճույքներով»:

Տերեփուկ – քնքշություն, պարզություն, միևնույն ժամանակ՝ կենսաթուրքություն և հավատարմություն: Երիտասարդ աղջիկների տերեփուկ նվիրելը համակրանքի նշան է:

Այդպիսի նվերը կարող է նշանակել ընկերություն կամ կիսատ թողած ծանոթություն վերսկսելու առաջարկ: Տերեփուկ նվիրելով խոստովանում եք, որ դուք շատ կարևոր եք իր կյանքում՝ «Զեմ համարձակվում արտահայտել իմ զգացմունքները»:

Հորտենզիա – համեստություն, անկեղծություն, հույս: Շատ ազգեր հավատում են, որ հորտենզիան ի վիճակի է քշել հիվանդություններն ու դժբախտությունները: Վերջինս ասում է՝ «Հիշիր իմ մասին»:

Դիխ – վստահություն, իմաստություն, հավատ, հույս, անվախություն: «Ես թանկ եմ գնահատում քո ընկերությունը»: Այն Ֆրանսիայի խորհրդանշան է:

Դե ինչ, եթե չեք համարձակվում ասել ձեր սրտի խոսքը ձեզ հարազատ, մտերի մարդկանց, ասեք դա ծաղիկների միջոցով:

Արհա Ազնավուրյան

АРМЯНСКИЙ ЯЗЫК ДЛЯ САМЫХ МАЛЕНЬКИХ

Ճ Ճ



ՃՆՆՈՒԿ

Ճնճղուկը ծառի ճյուղից ճտճում էր՝ այ ճտեր, Երազում մի կորեկ կորցրի, ճիշտն ասե՛ք՝ հո չե՞ք գտել...

Մ Մ



ՄԵՂՎԱԿ ՊԱՊԸ

Մեղվապահ է Արմո պապը, Աստվածատուր մեղվապահ: Հիվանդանա՝ անուշ մեղրով Կրուժի քեզ անհապաղ: Կրուժի ու կպատմի բոլոր ծաղիկներից, դաշտերից եվ, իհարկե, ամենից շատ՝ Մեղուներից պաշտելի:

Յ Յ



ՅԱՍԱՆԻ ՏԱՌԿՆԵՐԸ


Յասամանի թփերը ճոխ Երբ ծաղկում են մեր բակում, Թվում է, թե բոլորիս են Իրենց շուրջը հավաքում: Վազվում ենք ամբողջ օրը, Դիտում, հրճվում, հիանում Եվ ծաղիկները լավագույն Մայրիկներին ենք տանում:




Рубрику ведет преподаватель армянского языка Арmine Варданян

Նյութը վերցված է Յուրի Սահակյանի «Այբբենարանի ուղեկից» գրքից
Տպագրության պատրաստեց Արմինե Վարդանյանը


КРОССВОРДЫ ОТ ШОГИК СИМАОНЯН



Кроссворд № 19
По направлениям стрелок:
1. Качели. 2. Короткий.
3. Болота. 4. Муха.
5. Канат, трос. 6. Новый.



Кроссворд № 20
По вертикали:
1. Жемчуг. 2. Один. 3. Пчела.
По горизонтали:
1. Свеча, воск. 4. Верблюд.



Кроссворд № 21
По направлениям стрелок:
1. Масляная краска. 2. Вокзал.
3. Имя родоначальника.
4. Сирень.



Рубрику ведет преподаватель армянского языка Шогик Симавонян

Օրերի հետ

ՀԱՅՏՆԻ ԱՄԵՆԱԽԵԼԱՑԻ ՀԱՅՈՒՀԻՆ

Այս տոնական օրերին մի պահ կտրվենք առօրյայից և ծանոթանանք հայտնի հեռուստաստոր Մարգարիտա Միմոնյանի հետ:

Թագուհի Մարգո

Russian Today հեռուստաալիքի գլխավոր խմբագիր Մարգարիտա Միմոնյանը համարվում է Ռուսաստանի խելացի կանանցից մեկը: Կապուտաչ, սևահեր գեղեցկուհի Մարգարիտային հաճախ կոչում են Նաև Կրեմլի ուստա կամ Թագուհի Մարգո: Ռուսական միջավայրում նա ողջ լրագրողներից հաճախ



եր տարբերվում բնական և անմիջական պահվածքով, որը ճշմարտացի երևազ էր տալիս նաև նրա պատրաստած հեռուստանյութին կամ վարած հարցողություններին: Նա սկսել է որպես Կրասնոդարի երկրամասի տեղական հեռուստաալիքի լրագրող, քանի որ հենց այնտեղ, հայկական ընտանիքում է նա ծնվել: Հետո արդեն աշխատել է ռուսական կենտրոնական ալիքներում, լրագրանել Պուտինին և նրա քաղաքականությունը, պատրաստել ռեպորտաժներ պատերազմական Չեչնիայից, ապա և մի շարք պատասխանատու պաշտոններ վարել՝ համառուսական հեռուստաալիքներում: Նա անցել է պարզ, հասարակ ընտանիքից ելած աղջկանից մինչև

Ռուսաստանի ամենաճանաչված դեմքերից մեկը լինելու ճանապարհը սեփական տաղանդի, աշխատասիրության և համառության շնորհիվ, շրջանցելով փառքի գլուխները կորցրած շատ հեղինակավորների՝ իր հասարակ ծագումն ու պարզ ընկերական կապերը չմոռանալով, երբեք չմեծամտանալով, միևնույն ժամանակ կրեատիվ, նոր մտեցումների առաջ միշտ բաց լինելու հատկանիշների օգնությամբ:

Վերջերս Մարգարիտա Միմոնյանը մի շարք ռուսական հեղինակավոր պարբերականների հարցումներով ճանաչվել էր Ռուսաստանի մեդիադոլորտի ամենաազդեցիկ հինգ կանանցից մեկը, նրա անունը անցած տարվա բոլոր հրապարակումներում նշվել է 802 անգամ: Նա ընդամենը 32 տարեկան է: Այժմ նա ռուսական NTV հեռուստաալիքի երեքում Թիմա Կանդեյակի հետ, ով նույնպես հայկական արմատներ ունի, վարում է ուղիղ հեռարձակվող «Երկաթե տիկնաջ» հարցորդումը: Ի դեպ, հարցորդումն արդեն հասցրել է սիրվել և ունենալ լայն հեռուստայարան:

Նրա շուրջ ամեն օր տեղծվում են բազմաթիվ ասեկոսներ ու բանբասանքներ, մշտապես աշխարհիկ խոսակցությունների բում է, նա գեղեցիկ է, խելացի, նոր գաղափարներով լի, քաղցենի չէ և մշտապես փայլում է իր ուղիղ, ոչ կեղծավոր խոսքով, պորբեմն արմատից ցույց տալու հատկությամբ, որի պատճառով շատ թշնամիներ է վատարկում: Դեղին մամուլն ամեն օր հորինում է, թե ում հետ է նա երևում այս կամ այն աշխարհիկ երեկոյին, ում հետ է քնում: Բանն այնտեղ հասավ, որ վերջերս բոլոր այդ բանբասանքների պատասխանեց ինքը՝ թագուհի Մարգոն, հանրահայտ մի պարբերականով դիմելով նաև հորը, թե՛ գիշերը հանգիստ քնիր, հայրիկ, մի հավատա բանբասանքներին, դրանք բոլորը տուտ են, պարզապես բոլորին հանգիստ չի տալիս Մարգարիտա Միմոնյանի անձը:

Պատրաստե՛ք Արմինե Հովսեփյանը